ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 10 ֆր. և կամ 4 ղրւշ. թղթդրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարեկան 20 ֆրանգ
Ցնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց տեւէ յաւելման բաժնեղնին վրայ։ Հատով կը ծախուի ամեն տեղ 20 սանթիմ

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ե ՏԱՐԻ ԹԻՒ 22

1889 ՆՈՅԵՄԲԵՐ 2

ՀՈԿՏԵՄԲԵՐ 21 (Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Կ՚հրատարակուի Դ., և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ· 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպա եւ Հայեր. — Հայերի կրած հարստահարութիւնները· — Հայ գաղթականք ի Միացեալ-Նահանգս Ամերիկայի· —Հայեր ի Թիւրքիա·—Աբեւելեան նամականի (նամակ Կ. Պօլսեն).— Տեղական·— —Արտասահմանի լուրեր. — Յանուցմունք։

ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գուցէ Եւրոպայում Հայերի մասին երբէք այնքան չեն խօսել ու գրել, որքան այս վերջին ժամանակները։ Հոգեւորական և աշխարհական, այր և կին հետաքրքրւում են մեր ազգի ներկայով և անցեալով· իսկ պարբերական հրատարակութիւնները Հայ և Հայաստան անունները ժամնի պէս բերանին են վերցրել, դէն ձգել չեն ուզում։ Ահա մի անգլիական թերթ — Daily News ուզում է յայտնի Գ. Ֆիլդերլդին Թիւրքաց Հայաստան, այնտեղի քրիստոնեաների դրութիւնն ուսումնասիրելու համար. միևնոյն ժամանակ պատուելի լրագիրը պարտաւորւում է այն անտարբերութեան պատճառով, որով եւրոպական ազգերը վերաբերւում են դէպի նոյն երկրի քրիստոնեաների անմխիթար վիճակը։ Թերթին աշակերտում է և կէնաարբերի արքեպիսկոպոսն, որը մի մեծ միջնադար տաճնարանութիւն է անում նոյն Թիւրքաց Հայերի վիճակի մասին։ Մի ուրիշ հոգեւորական՝ Բաքուեցոն արքան, կարդում է մի պեկցում հին Հայաստանի աշխարհագրութեան մասին։ Կանայք եւս չանք են անում յեռ չմնալ ազատարդկանցից. մի խումբ անգլուհիներ, տիկին Գլադստոնի նախաձեռնութեամբ, պատրաստում են կազմել մի ընկերութիւն, որի նպատակը պիտի լինի հետաքրքրել Թիւրքաց Հայաստանի կանանց դրութեամբ։ Իսկ գլխաւորը և գործնականը (բան երեւոյթին) այն է, որ Հայկական խնդիրը միևչեւ անգամ մտնում է անգլիական պարլամենտը, Սալիսբրիին, պահպանողական կաբինետի գլխաւոր պատասխանում, միևնոյն ժամանակ և գայլացնում Թիւրքաց միապետ Սուլթանին։ —Հայերի պաշտպաններից մէկը՝ երեւելի Գլադստոն, ասում է· «Դաշնագրի զօրութեամբ Անգլիան իրաւունք ունի պահանջել Սուլթանից՝ վերջ տալու այն հարստահարութիւններին և անմիջապէս պատժելու յանցաւորներին։»

Այս բոլորը տեսնելով, կոմիտակի գիտողը կը կարծէ թէ միջնադարեան խաչակիրների արշաւանքները նորոգվել են Եւրոպայում, միայն խաչակիրների նպատակն այժմ ոչ թէ Սուրբ երկիրն է, այլ այդ երկրից ոչ հեռու գտնվող Հայաստանն է։ Պետրոս Ամիւնային յաջութիւն է առել ի դէմս մանուկի, որը քարոզում է ընդհանուր արշաւանք բարբարոս մուսուլմանների դէմ, յորդորում է պէնքով պաշտպանել քրիստոնեաների իրաւունքները։ Ժամանակի ընթացքում պէնքերն էլ են կերպարանափոխվել. այժմեան խաչակիրները իրի ու նիզակի փոխարէն գործ են ածում սրտաժայր դրիշներ, իսկ տրիւնի տեղ թափում են... թանաք։

Այո՛, եւրոպացիները Հայերի մասին շատ են գրում ու խօսում։ Եւ դրա չարժուհիմն եղել է ոչ թէ մի որ եւ է անձնասուրութիւն, կամ մինչև անգամ մի խումբ մարդիկ, կամ մի թերթ, ինչպէս մի քանի անհատներ ջանք են թափում հետաքրքրել միաժամ հասարակութեան. ո՛չ, դրանք չեն. բուն շարժառիթների ծայրը պէտք է փնտռել նոյն իսկ Հայաստանի մէջ. եթէ Հայերը շարժուձեւեր չգործէին, եւրոպային երբէք ուշադրութիւն չէր դարձնել նրանց վրայ։

Բայց ինչո՞ւ չահատէր անգլիացին իր գործերը թողած, ուրիշի գործով է զբաղվում, իր երկրի չարիքները առժամանակ աչքից հեռացրած, հայերի անմխիթար վիճակն է նրան անհանգստացնում։ Միթէ՞ նա այնքան բարի և գթառատ է, որ իր չահերն անտես կանի, իր գրամը, ժամանակը կը վատնէ ուրիշներին օգնելու, ձեռք մեկնելու համար։ — Ո՛չ, անգլիացին այնքան անխելք չէ ինչպէս մենք ենք կարծում. նա մեր միաժամութեան վրայ վաղուց է որ ծիծաղում է։

Չենք կարողանում հասկանալ, որ Անգլիացում, ինչպէս ամենուրեք, կան զանազան քաղաքական կուսակցութիւններ, որոնք չան և կատուի պէս չեն ուզում իրար հետ հաշտվել, աշխատում են մէկը միւսին գլխովին ծածկել, յայտնել, և յաճախ ընդհանրական չահերն աչքաթող արած, իրար կը-

ծածկվում են միայն պարապվում։ Անգլիական կառավարչական դէկը գտնվելով Սալիսբրիի, պահպանողական կուսակցութեան (tory) ձեռքում, վերջինս կառավարում է երկիրն համաձայն իր ուզածին պէս։ Ազատամիտ կուսակցութիւնը (whig) ամեն չանք թափում է խլել իշխանութեան իրաւունքը թշնամու ձեռքից։ Դրա համար նա միջոցներ է փնտռում հակառակորդին թուլացնելու, նրա վարկը հասարակաց աչքում վայր ձգելու համար։ Այժմ առիթից օգուտ քաղելով, Հայկական խնդիրը նա «մտաի փաթաթան» է չինել և անգլիական խորհրդարանում աշխատում է գոյց տալ այժմեան մինիստրութեան քաղաքական անընդունակութիւնը։ Աշխարհից տեղեկութիւն չունեցող մարդը էլ կարող է այս եզրակացութեան հասնել, եթէ քիչ ուշադրութեամբ կարդայ պարլամենտում խօսած ճառերը (1)։ Նա կը տեսնէ, որ հասարակութիւնը այն ժամանակին է հաւանութիւն յայտնում ճառախօսին, երբ վերջինս կծու խօսքեր է ասում այժմեան անգլիական կառավարութեան։ Բերենք մի քանի օրինակներ։

Բրայս ասում է. «...Չեմ կարող առանց յուզուելու յիշել որ մեր ասիկանութիւն մի օտար կառավարութեան (Թիւրքին) ձեռք խաղալիկ եղաւ, որ գոյութիւն է հասմայն աչխարհի և որի համար կը ցաւիմ որ այժմեան մեր կառավարութեան իշխանութիւնն անարժան ձեռքի մէջ կը գտնուի (հակառակ կուսակցութենէն ծափահարութիւններ)։ ... գարձեալ կրնան նոր ապէսներ և մի նոր պատերազմ առաջ բերել (Թիւրքիան բռնած ընթացք), որ այն ատեն խնդիրն չատ դժուար և փափուկ մի կերպարանք կառնէ նոյն իսկ մեր երկրի համար թերեւս (հառանութեան ազազակներ)։»

Գլադստոն ճառում է. «...Արդ՝ իմ նպատակ չէ պարբաւել Թագուհու կառավարութիւնը, այլ ողբալ Սրբ Յէկիւսդրի րրած փորձին վրայ, որ իր ամեն լատահեռութեամբ հանդերձ չկարողացաւ գոհացուցիչ կերպով ապահովել ժողովը (ընդհանուր ծափահարութիւն)։»

(1) Տեսնել Արմենիայի 4րդ տարի, թիւ 70, 71։

Մենք չենք բացատրում այն, որ կարող են գանվել առանձին անհատներ, որոնք սղատութեան ճշմարտութիւնով տագնապած, որտանց, առանց որ եւ է չահի կը ցանկանան մի թշուառ ազգի համար բարեկեցութիւն, առանց որ եւ է ակնկալութեան կաչխատեն նրա ազատութիւնն իրագործելու։ Թեպէտ թուով քիչ, լորդ Բայրոններ եղել են և միշտ կը լինեն։ Հաւանական է, որ Գլադստոն, Բրայս, կէնաարբերի արքեպիսկոպոսն, իրրեւ առանձին անհատներ չատ բարի, յոյժ գթառատ են, խեղճերի և թշուառների տառապանքները նրանց զայրացնում են։ Հարցը դրա մէջը չէ. յայտնի գաղափար ունեցող Հայեր ապատում են Հայաստանի համար ողորմութիւն ո՛չ թէ առանձին մարդկանցից, որոնք թող ուժով անկապ լող են լուրջ բան չինելու, այլ կառավարութիւնից, որի ձեռքումն է այժը և կարողութիւնը։

Արդ՝ կառավարութիւնը, լինի նա ազատամիտ կամ պահպանողական, առանց իր օգտի կը յագեցնէ՞ մեր միամիտ Հայերի ցանկութիւնը, իր դրամից դրամ կը մուծէ՞ Հայաստանի ազատութեան համար։ Հետեւեալ օրինակը պերճախօս ասում է՝ ո՛չ։

Երբ 1881 թուականին բարեսիրտ Գլադստոն կառավարութեան գլուխն էր, այն Գլադստոն որ այժմ ուռանդով Հայկական հարցի պաշտպան է հանդիսանում, այդ նոյն իսկ Գլադստոն առանց ուշադրութեան թողնել այն սերարակը, որի մէջ մանրամասնօրէն նկարագրված էին Հայերի քաշած տառապանքները և որը պահանջում էր անմիջապէս բարենորոգումներ մտցնել Թիւրքահպատակ Հայ սերարակի մասին ցանկութենից էր լորդ Սալիսբրի, որն այժմ այնքան չերմեռանդ պաշտպան է... Թիւրք կառավարութեան։

Կարող է պատահել որ Անգլիան իր օգտի, իր չահերի համար աշխատէ Փոքր Ասիայում կառուցանել ինքնագլուխ կառավարութիւն՝ Հայկական կամ քրիստոնեա—այդ նրա համար նշանակութիւն չունի—, որ Ռուսաստանից վախենալով, կառուցանէ նրա ճանապարհի վրայ մի պատնէշ. բայց միևնոյն Անգլիան չի պատրաստ իր մի քանի փարայի համար բնաջինջ ա-

«Հայոց Հայրենասիրական Միության Շեփիլդի մասնաճյուղը մեզ է ուղարկել հետևյալ նամակը, որ մենք սույն թվականի մարտի 15-ի համարում հրատարակել էինք «Ազատ խոսքի» տակ։ Ներկայացնելով նամակը՝ մասնաճյուղը ցանկանում է, որ մենք հրատարակենք նաև Ս. Պապկի պատասխանը։ Մենք կատարում ենք մասնաճյուղի ցանկությունը։

Խմբ.

Պ. Խմբագիր,

Ձեր թերթի մարտի 15-ի համարում տպագրված «Ազատ խոսքի» տակ Ս. Պապկի ստորագրությամբ մի նամակ կա, որի մեջ նա հերքում է մեր մասնաճյուղի կողմից ուղարկված հեռագրի այն մասը, որտեղ ասված է, թե Ս. Պապկի ելույթը ժողովում ոչ միայն ընդհանուր զայրույթ է առաջացրել, այլև ժողովի մեծ մասը նրան ծաղրել է։ Ս. Պապկի հերքումը հիմնված է նրա վրա, թե ինքը ոչ մի անգամ չի ասել, թե ինքը հավատում է Աստծո գոյությանը։ Մենք չենք ուզում վիճել այդ հարցի շուրջ, որովհետև մեր նպատակը ոչ թե աստվածաբանական բանավեճ սկսելն է, այլ միայն ցույց տալ, որ Ս. Պապկի ելույթը ժողովում ոչ միայն ծաղրել է, այլև զայրացրել։ Ինչ վերաբերում է Ս. Պապկի հերքմանը, մենք կարող ենք հավատացնել, որ մեր հեռագրում ասվածը ճիշտ է։ Ս. Պապկի ելույթը ժողովում ոչ միայն ծաղրել է, այլև զայրացրել։ Ինչ վերաբերում է Ս. Պապկի հերքմանը, մենք կարող ենք հավատացնել, որ մեր հեռագրում ասվածը ճիշտ է։ Ս. Պապկի ելույթը ժողովում ոչ միայն ծաղրել է, այլև զայրացրել։

Ս. ՊԱՊԿԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՈՒՅԺ ՎԱՃԱՌՔ

Ինչպես հայտնի է, Հայկական Հայրենասիրական Միությունը ստեղծվել է 1878 թվականին։ Նրա նպատակն է եղել հայ ժողովրդի ազատագրական պայքարին օգնելը։ Միությունը ունեցել է մեծ թվով անդամներ, որոնք վճարել են տարեկան որոշ գումար։ Միության գոյության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։ Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։ Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։

Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։ Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։

Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։ Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։

Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։ Միության գործունեության ընթացքում նրա անդամների թիվը հասել է 2000-ի։ Միության կենտրոնական կոմիտեն գտնվել է Լոնդոնում։

արտօնութիւններ ունենան իրենց երկրի մէջ, իրենց համար ձեռք բերին կրօնական կատարեալ ազատութիւն, և վերջապէս մէկ խօսքով, իրենց տրուին այն ամէն անհերքելի իրաւունքներ և արտօնութիւններ որ մեր ժամանակի ամէն քաղաքակիրթ և արդար կառավարութիւն պարտաւոր է ինքնին արդէն տալ իւր հպատակներուն։

Այս Միութիւն ունի մի զօրաւոր վարչութիւն որի գլուխը կը գտնուի մի մարդ —Պ. Մ. Փորթուգալեան— որ իւր ճշմարիտ հայրենասիրութեամբ և մեր երկրի բարեկեցութեանը համար ունեցած անկեղծ եռանդովը սիրելի եղած է ամէն Հայի։ Օտար մամուլի մէջ իր անուն յիշուեցաւ իբրեւ մեր ազգի «Բարնէլ»ը և այդ տիտղոս բոլորովին արդարացի տրուած է իրեն։ Երբ Աբմէնիա կը գտնուէր, ամբողջ իր ժամանակն նուիրած էր իր հայրենակիցներուն գաստիարակութեան գործին, աշխատելով միանգամայն անոնց իրաւունքներուն պաշտպանութեանն համար հարատահարիչ փաշաներուն և իրենց ստորակարգեալներուն դէմ։ Երբ անմիտ Թիւրքերն տեսան անոր խոհեմ աշխատանքներուն արդիւնքն եղող փոքր առ փոքր յառաջդիմութիւնն, սկսան վրդովիլ և վախնալ և որոշեցին հալածել զինք ու չհանգըստացան մինչեւ որ բռնի վտարեցին Հայաստանէն։ Այդ ժամանակէ ի վեր գրեթէ 5 տարի անցած է և թէեւ ղրկուած իր հայրենիքէ և իրեն սիրելի եղող ամէն բաներէն, նա չվհատեցաւ և երբ մի քիչ կը տկարանար, վոխանակ յուսահատուելու, իր եռանդն ու ջանքերը կը կրկնապատկէր ծառայելու համար այն գաղափարին ինքզինք նուիրած է, այսինքն է միջոցներ գտնել մեր հայրենակիցների այդ հարատահարուած դրութենէն ազատուելուն համար։ Նա այս մտքով անցաւ Մարսէյլ ուր սկսաւ հրատարակել մի լրագիր, արտասահմանի մէջ գտնուող Հայերին տեղեկացնելու համար այն բռնութիւնները որ հետզհետէ կը սատկանան Հայաստանի մէջ և այն տխուր հարատահարութիւնները որոց ենթարկուած են մեր եղբայրներ և քոյրերը մայր-հայրենիքին մէջ։ Այդ ժամանակէ ի վեր անխոնջ կերպով կը շարունակէ իր աշխատութիւնները, անդադար կրկնելով ամենադառն փորձութիւններուն և դժուարութիւններուն դէմ որ իր առջեւ կը հանեն Թ. Իրեն հակառակորդներն և Թ. Նիւթական միջոցների պակասութիւնն։ Բ. Դուռը գոհ չեղաւ զինք վտարելով միայն հայրենիքէն, այլ և հնարքներ կը փնտռէր ֆրանսական կառավարութեան տակ ալ անոր վնասներ հասցնելու իր լրագրի համար։ այլ սակայն Պ. Փորթուգալեանի պահանջածը մի ուրիշ բան չէ այլ ինչ որ վերեւ գրած եմ «Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակին առթով։ Աւժ. Դուբեան վարդապետին յանձնուած պաշտօնը երկրորդ փորձն եղաւ Բ. Դրան կողմէն, արժատախիլ անելու համար Պ. Փորթուգալեանի ցանած բարի սերմերն. բայց ինչպէս որ գիտած էր «Մի Հնդկաստանցի եկեղեցական»ն ձեր լրագրի մէջ, գոհացուցիչ է տեսնել որ Բ. Դրան այդ ծրագիրը եւս ի դերեւ ելաւ չատ խայտառակ կերպով և պատուիրակն ստիպուեցաւ վերադառնալ Կ. Պոլիս, աչքէ ինկած (in disgrace)։ Ես մի քիչ երկար դրեցի Պ. Փորթուգալեանի նկատմամբ, յայտնելու համար միայն Թէ նոր կազմակերպուած «Հայոց Հայրենասիրական Միութեան» վարչութիւնն յանձնուած է յարդելի և փորձառու մի անձի ձեռքերին որ իրեն խորհրդակից և գործակից ունի նոյնպէս եռանդուոտ հայրենասէր անձեր, այնպէս որ մեծ յոյսերով կրնանք նայիլ այս Միութեան ապագային վրայ որ կոչուած է մի կարեւոր դեր ունենալ մեր ազգի այժմեան պատմութեան մէջ։

«Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցութեան վճարքներն այնպէս կարգադրուած են որ ամէն մէկ Հայ անհատ կարող լինի անոր անդամակցելու։ Կարելի է անդամակցիլ վճարելով մէկ տարուն համար 55 ֆրանգ կամ Թէ 25 ֆր. որ հնդկական դրամով կանէ մի քիչ պակաս 33 ռուփիէն և 15 ռուփիէն։ Կարելի է նաեւ անդամակցիլ իբրեւ նուիրատու անգամ և 15 ռուփիէն պակաս ոեւէ մի գումար տալ իբր տարեկան անդամավճար։ Անոնք որ կը փափաքին Միութեան «պատուոյ անդամ» լինել, կը պարտին դէթ 300 ֆրանգ մէկ անգամէն նպաստ նուիրել Միութեան, որ լսել է 300 ռուփիէն մի քիչ պակաս։

Վերջացնելով նամակս, հրաւէր կը կարդամ մեր հայ հասարակութեան պատկանող ամէն մէկ անհատի, որ եթէ մտնակցած չէ դեռ «Հայոց Հայրենասիրական Միութեան», հաճի ուշադրութիւն դարձնել Միութեան առաջադրած նպատակին վրայ և անոր անդամակցելով քաջալերել ներկայ ժամանակի մէջ Հայերի ձեռնարկած ամենամեծ գործը։

Մինչ պատրաստ եմ և բազդատուր կը համարիմ դիս այս նկատմամբ հարկ եղած տեղեկութիւններն հաղորդելու ամէն անոնց որոնք կը փափաքին անդամակցիլ այս «Միութեան»։

Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Միրզափուռ, 7 սեպտ.

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսէն մեզ կը գրեն հետեւեալը. «Անցած տարի Հռովմէական Նուիրեալն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պիրկը վերադարձած Աւժ. Տ. Սահակ վարդապետ Նազարէթեան որ Առաքելարէն Կ. Պոլիս բերուելէն ի վեր այսաեղ եկեղեցիներուն մէջ հայրենասիրական և կրօնասիրական ազդու քարոզները կը խօսէր, Ս. Պատրիարքէն ազգապարծութիւն ընդունեց որ այլ եւս չխօսի ազգային կամ քաղաքական համարուած խնդիրներու վրայ եկեղեցւոյ մէջ։»

—Սերաստիայէն կը հաղորդեն որ Բաֆրէն գիւղին մէջ Բիւրաներ ապրած են մի Հայ, Բագէշցի Սարգիս, որ ասիական երկաթուղու ընկերութեան ճանապարհին վրայ աշխատելով մի քիչ ատակ չահած էր և հայրենիք պիտի վերադառնար։ Սերաստիայի մէջ կը հիւանդանայ և ընկերութիւնը խնամ կը տանի իրեն մինչեւ որ առողջանալով ճանրայ կերնէ հայրենիք վերադառնալու համար և ճանապարհին վրայ կը սպաննուի Բիւրդերէն։

Նոյնպէս կը հաղորդեն որ 4 վանցի լարախաղացներ որոնք Սերաստիա գնացած էին իրենց արհեստ դործադրելու համար, վան վերադարձած միջոցին ճանապարհին վրայ քիւրտ հրոսակութիւններէ պաշարուելով կողոպտուեր են։

—Զմիռնի «Արեւելեան Մամուլ»ի խմբագիրը Տիար Մատթէոս Մամուրեան Կ. Պոլիս գնացած է։ Տիարք Մէզպուրեան, Դուրդէն, Պէրպէրեան են. մի ճաշկերոյթ տուած են Բէրայի մէջ իրեն պատուելու համար։ Տիար Մէզպուրեան իւր տուն եւս հրաւիրելով մի ճաշկերոյթ տուած է ուր Դեր. Մելքիսեդեկ եպիսկոպոս ալ ներկայ գտնուած է, ինչպէս նաեւ Աղգայնի ժողովի անդամներէ մի քանին։ Կը խօսուի թէ Տիար Մամուրեան մտադիր կ. Պոլիս հրատարակել «Արեւելեան Մամուլ»ը, ամենօրեայ թերթի վերածելով։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Կ. Պոլիս, 22 հոկտ. 89

(Շար. 21րդ բուհն եւ վերջ)

Ալմանախան դեսպանը արարողապետ փաշային տուած է այն անձերի ցանկը որոնք Վիլհելմ կայսրի հետ կուգան։ Այդ ցանկի մէջ նշանակուած են 13 բարձրադոյն սպայներ և պալատականներ, կոմս Հէրպերթ Պիսմարք իր նախարարութեան ութ պաշտօնեայներովն որոնց չորսը հեռագրող (télégraphiste) են, Պ. Սալզման՝ խորհրդատու մի մարդ որ ուղեկցած է Վիլհելմ Բ-ին ինչպէս անուանին Սթրէսպէր կուղեկցէր Վիլհելմ Ա-ին։ Կայսրուհուն ընկերակցած են պալատական երեք տիկիններ և երկու Պարոններ որոց մին իր քարտուղարն է։ Սպասաւորներուն թիւը 35 է։ Այստեղ չատ կը խօսուի այն թանկագին ընծայների վրայ որ Սուլթանը պիտի նուիրէ Վիլհելմ կայսրին ու կայսրուհուն. յայտնի է արդէն որ Սուլթանը ներկայ ժամանակի ամենէն պերճասէր և առատաձեռն վեհապետն է։ Վիլհելմ Բ-ին ընծայուելու համար պատրաստուած է մի ոքանչելի թուր որի պատեանը և կոթը (երախակալ) ատեղազարդ կը փայլին ադամանդներով։ Կայսրուհուն պիտի ընծայուի անհիւանդուր ադամանդներով (պըրլանթի) և թանկագին քարերով զարդարուած մի վարսակալ (diadème)։ Բէրայի լուսանկարիչներուն պատուէր տրուած է երկու շաբաթ այլպիսիներ պատրաստել որոց մէջ պիտի գտնուին Կ. Պոլսի տեսարանները ներկայացնող 300 լուսանկար պատկերներ։ Շատ երկար կը լինի մանրամասն թուելէ տրուելիք բոլոր ընծայներն։ Այս ամենը, կը հաւկնաք անշուշտ, որ դրամի կը կարօտի և շատ դրամի. այնպէս որ հարկ պիտի լինի առնուազն մի քանի միլիոն ֆրանգ փոխառութիւն անել տեղական դրամատուններէն։

Անցեալ օր Օսմանեան պանքան նորընտիր ընդհանուր-տնօրէնը Սըր Էնկարտ Վինսըն պալատը հրաւիրուելով այնպիսի շնորհալի կերպով ընդունուեցաւ և Սուլթանն ալ այնչափ փափկանկատ ուշադրութեան արժանացուց զինք իր առաջին պատուաւորութիւն պիտի լինի այդ մեծ դրամատան տնտուկը բանալ պալատին համար (1)։

Այն օր որ Սըր Էնկարտ Վինսըն ճաշեց կայսերական պալատին մէջ, իրեն սեղանակից կը գտնուէր «Սուա Տէրվիչ»ը, այսինքն Հունգարացի վանդերին որ երբեմն Թիւրքաստանի մի քանի քաղաքներն նկարագրութիւններն հրատարակած է, Թէեւ, ինչպէս կը հաւատան, բնաւ տեսած չէ այդ քաղաքները, որ սովրած է ասիական շատ լեզուներ և որ մի քանի տարիներէ ի վեր իրեն հաստատներ ապահովելու վրայ է Անգլիոյ և Թիւրքիոյ մէջ, աւելի կամ պակաս բերնին եկածը դուրս տալով Ռուսերին դէմ։ Թերեւս ամենքին յայտնի չլինի որ նախապաշարումներէ ինքզինք արձակած այդ Հունգարացին երբեմն մահմէտական եղած, Մէքքէն այցելած և այնտեղէ դարձած է մի նոր անուն իր վրայ առ-

(1) Լրագրական վերջին լուրերէն կը տեղեկանանք որ Բ. Դուռը այս օրերս 100 հազար օսմ. ոսկի փոխառութիւն արած է Օսմանեան դրամատունէն պալատին համար։ Ուրեմն սկզբնաւորութիւնն եղած է արդէն փոխառութեան։ ԽՄԲ։

Նելով, այն է Հոկի Բաշիտ էֆէնտի։ Բաւական ժամանակ յետոյ երբ Հոկի Բաշիտ էֆէնտին վերստին գնացած է Բէյթա, Հունգարիոի մայրաքաղաքը, ձեւի համար նորէն դարձած է քրիստոնէութեան, թէեւ ինք այստեղ յայտարարած է մի քանի անձերի, որոց անուններ կրնամ տալ, թէ ինք ո՛չ քրիստոնէութեան կարեւորութիւն կուտայ եւ ո՛չ իսլամութեան, այլ ամեն բանէ յառաջ ինք ազատախոհ (libre penseur) է։ Իր մահառւական հայարտութիւն վիրաւորուեր է որովհետեւ Կ. Պոլսի հայ գիտնականներն չեն գնացեր իրեն բարի գալուստ մաղթելու. ուստի «Թայմզ» լրագրին մէջ մի յիմարական եւ չարաւիտ նամակ հրատարակած է Հայերին դէմ (2)։ Որովհետեւ անցած տարի գարունին Լոնտոնի մէջ մի բանախօսութիւն արած էր որով ցոյց տուած էր Թիւրքիոյ յառաջդիմութիւնները, բնականապէս բարեհամբաւ ուշադրութեան արժանացած է հոս բարձրագոյն շրջանին մէջ եւ անցած օր Սուլթանին սեղանակից եղած միջոցին, հունգարական ազգային եղանակը նուագած են. «Գիտէ՞ք, ձե՛ղ համար է այս» ըսած է իրեն Սուլթանը չնորհալի կերպով։ Եւ Ծերունի վամպէրին պալատէն մեկնելէ յետոյ գնացեր ամեն տեղ պատմեր է, ըսելով թէ իր կեանքի ամենէն գեղեցիկ օրն եղած է այդ օր։

Չեմ կարող ճիշդ պատճառն ըսել ձեզ, բայց սա հաստատ իրողութիւն է թէ իտալական կառավարութիւնը վերջնականապէս մերժեր է ընդունիլ Վահան էֆէնտիին Հռովմի դեսպան անուանուիլը։ Կը կարծեն գիտնալ ոմանք թէ նախարարապետ Գ. Քրիսբին նախապաշարումներ ունի Հայերին դէմ։ Այլ սակայն Վահան էֆէնտին իր բնաւորութեամբ, համեստութեամբ եւ լեզուով իր ազգի լաւագոյն նմոյշներէ մին է։

Պրէյն խոստացած էի ձեզ գրել Փերանական այն դժբաղդ հիւանդանոցի մասին որի համար Փրանսական կառավարութիւնը 400,000 Ֆրանգ նուիրած է Կ.Պոլսի Ֆրանսական դաղթականութեան։ Տեղիս հիւպատոսարանը մի քանի ամիսներէ ի վեր սակարկութեան մէջ էր Սուլթանի առաջին սենեկապետին հետ, անոր սեպհականութիւնն եղող 12,000 քառակուսի մէթրի չափ մի հողի համար որ 200,000 Ֆրանքի կուզէր ծախել, այսինքն իրեն գնած գնին եռապատիկը։ Յետոյ աւելի ընդարձակ մի տեղ գտնուեցաւ որ նոյնպէս պալատական մի պաշտօնեի կը վերաբերի եւ որ 90,000 Ֆրանքով առած է։ Այդ գումարի մէկ մասը աւանդ յանձնուած է «Ֆրէմի Լիոնէ» դրամատան եւ մնացածն ալ ամրողջապէս պիտի յանձնուի այն օր որ վճռառուած լինելու պաշտօնական ձեւակերպութիւնները կը վերջանան։ Ցուսանք որ ձիւ դարը դեռ չլրացած, Փրանսական գաղթականութիւնը մի հիւանդանոց կունենայ այստեղ։

(2) Կ. Պոլսէն մեզ կը գրեն թէ Արմենիոս վամպէրի, արեւելագիտի համբաւ հանող այդ անձ որ սակայն Հայաստանի գոյութիւնն դեռ չգիտէ եղեր, Կ. Պոլսէն մեկնելէ յառաջ ընդունելներ է մի քանի հայ հայրենասէրներէ այցելութիւնն որոնք յայտարարեր են իրեն թէ Հայեր Օսմանեան տէրութենէն անկախ լինելով բաժնուիլ չեն ուզեր, այլ իրենց երկրի բարեկարգութիւնը կուզեն եւ ինչպէս որ Հունգարիա Աւստրիայէն բաժնուած չէ, այլ անոր հետ միացած լինելով ունի նաեւ առանձին վարչական մարմին, Հայաստան ալ կրնայ նոյնը լինել Թիւրքիոյ վերաբերութեամբ։ Պ. Վամպէրին ցաւ յայտներ է թէ մինչեւ այժմ Հայեր չեն գնացած պինք փնտռել եւ իրր թէ այժմ Հայերի հաւատարմութիւնն ու իսկական ցաւերն հասկցած լինելով, խոստացեր է խօսիլ Սուլթանին ...։ Օտարներու սուտ եւ անօգուտ խոստումներ ...։ ԽՄԲ.

ՏԵՂԱԿԱՆ

Անմահն Ներսէս Պատրիարքի վախճանման հինգերորդ տխուր տարեդարձին առթով հոգեհանգստի պաշտօն եւ պատարագ պիտի մատուցուի Հայոց մատրան մէջ (rue de l'Ormeau, 13) նայեմ. 10ի (Ն. Տ.) կիրակի օր։

Ցուսով ենք որ ամեն Հայ նուիրական պարտաւորութիւն կը համարի նոյն օր ներկայ գտնուելով պատուել ողբացեալ Ներսէս Պատրիարքի անմոռանալի յիշատակը։

—Կիրակի օր, Յոյների եկեղեցուն մէջ (rue de la Grande Armée) հանդիսաւոր կերպով գոհաբանական աղօթքներ կարդացուեցան Ցունաստանի գահաժառանգ իշխանին Սոֆիա իշխանուհուն հետ ամուսնութեանն առթով։ Մեծ բազմութիւն ներկայ կը գտնուէր։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

«Թայմզ» կը գրէ թէ յունական նաւատորմիղը գէշ վիճակի մէջ կը գտնուի։ Կը խորհին մի քանի աշակերտներ դրկել Լոնտոն Նաւային վարժարանը։

—Յոյն կառավարութեան նոր չինել տուած «Սբէձիա» զրահաւոր շոգենաւը որ Ֆրանսայի մէջ չինուեցաւ, անցած ուրբաթ օր Հավրի նաւահանգիստէն ծովը իջեցուցած են հանդիսաւոր կերպով։ Յոյների վարդապետը Մարսէյլէն գնացած է Հավրը կրօնական արարողութիւն կատարելու համար այդ առթով նոր շոգենաւին մէջ որի անունը դրած է «Սբէձիա», կնքամայրութեամբ Տիկին Տէլիանիսի, կնոջ Փարիզի յունական դեսպանին որ դեսպանատան բոլոր մարդերով գնացած էր Հավրը ներկայ գտնուիլ այդ արարողութեան։ Ֆրանսայի ծովային նախարարն ալ մի քանի մարդերով գնացած է Հավրը։ Սերպիոյ Միլան Թագաւորահայրն եւս ներկայ գտնուեր է հանդիսին։ Պր. Տէլիանիս այս առթով մի ճաշկերոյթ տուած է տեղական իշխանութեան ներկայացուցիչներին, հրաւիրուած պաշտօնական անձերին եւ այլն։ Սեղանին մասնակցած են 120 անձեր։

—Ամէնքն կը հետաքրքրեն հոկտ. 25ին թէ Զարեւիչը նշանուեր է Ցունաստանի Թագաւորի աղջկան Մարիա իշխանուհուն հետ։

— Վիլհելմ Թագաւորը իր հետեւորդներով մեկնած է Ամէնքէն հոկտ. 31ին, իր գահընակութիւն յայտնելով Պ. Թրիքուբիսին իրենց եղած ընդունելութեան համար։ Կոմս Հերպերթ Պիսմարք ըսած է Պ. Թրիքուբիսին. «Շատ ուրախ եմ, Պարոն, զձեզ ճանչած լինելուս համար։ կը յուսամ դեռ վերստին տեսնել Ամենիսի մէջ։» Կայսրը նստած էր «Կայսր» շոգենաւին մէջ, իրեն առջեւէն կերթար «Հօհէնձօլերն» շոգենաւը, ալ կողմէն կուգէկոյկին ամմանական 8 պատերազմանաւեր, իսկ ձախ կողմէն անգլիական 7 պատերազմանաւեր եւ իտալական 4 զբօսանաւորներ։ Այդ 21 մարտանաւերի համախմբումը մի պատկառելի տեսարան կը ներկայացնէր։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նոր հրատարակութիւններ

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՏՈՒԹԵԱՆ

«Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ինչ իզձեր պէտք է ունենայ եւ ինչ պարտքեր ունի կատարելու։

Գինն է 20 սանթիմ եւ կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Մէկ անգամէն 20 օրինակ գնողը կը վճարէ 3 Ֆրանգ եւ 50 սանթիմ միայն, փոխանակ 4 Ֆրանգի։ Փոստի ծախքը կը վճարուի «Հայրենասիրական Միութեան» կողմէն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Է

ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՊԱՏԿԵՐ ՄՕՏԻԿ ԱՊԱԳԱՅԻՑ)

ԳՐԵՑ Մ. Պ.

(Այս տեսարկի մէջ ցոյց կը սրբուտուի թէ բռնաւորներուն եւ ազգամատնիչ Հայերուն գատաստանը ի՞նչպէս պէտք է տեսնուի այնպիսի երկիրներուն մէջ ուր օրինաւոր եւ արդարադատ կառավարութիւն չկայ։)

Մէկ օրինակի գինն է 20 սանթիմ։ 20 օրինակը 3 Ֆրանգ եւ 50 սանթիմ։ Փոստի ծախքը կը վճարուի Արմենիայի խմբագրատունէն։

Հեռաւոր գիւղերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Այժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ (սպառած)։

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՅԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն եւ մտածումներն են Յաղմոսի ոճով գրուած)։ 40 սնթմ.։

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած ջանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) 1 ֆր. 50 սթմ.

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.— (Հայաստանցիներն Թշուառութեան գլխաւոր պատրուակներէն մին եղող պանդխտութիւնը մեր ազգային նորընծիւղ վիպասանի գրչին նիւթ եղած է ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ անուն վէպին մէջ։ Իրական կեանքէ առնուած այդ վէպ որ մաս առ մաս կը հրատարակուէր Արմենիայի մէջ, առանձին տետրակով ևս հրատարակուած է այժմ եւ կը ծախուի Մեծ. Հեղինակին Պարոն Մկրտիչ Թիւթիւնճիւֆֆի մօտ, ինչպէս նաեւ Արմենիայի խմբագրատունը)։

1 ֆր. 20 սանթիմ

Զ. ԴԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենի առարտեղ։ (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաչուն ընթերցուածներէն 3ը՝ որոնք իր «Բանաստեղծութիւններ»ի հատորին մէջ չեն գտնուիր, առանձին տետրակով հրատարակուած են)։ Այս տետրակէ որի շահը բարեգործական մի նպատակի յատկացած է, 50 հատը մէկ անգամէն գնողին կը տրուի 50 հատը 2 ֆրանգ 50 սանթիմի, որ ըսել է հատը 5 սանթիմ կամ 40 փարա թրքական։

Հատով կը ծախուի 0.10 սթմ.

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ

ՇԻՄՄԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Մեր վերջին Թագաւոր Լեւոնի շիրմին պատկերն ունենալու համար շատեր կը դիմեն մեզ տակաւին, թէեւ վաղուց արդէն յայտարարած ենք թէ այդ պատկերները սպառուած են։ Արդ կուգանք յայտնել ցանկացողներին թէ Արմենիայի Ա. տարւոյ 79րդ թիւէն որ այդ պատկերը կրպարտնակէ իր մէջ եւ որ այդ պատճառով յատկապէս սովորականէն տարբեր գեղեցիկ թղթի վրայ տպուած է, մի քանի հատ տակաւին մնացած կան իրմ. բաժրատունը։ Ցանկացողներին կարող ենք դրկել անմիջապէս, հատը մէկ ֆրանգի, ճանապարհածախքը իրմէ. դրատան վրայ։

Այդ թերթի մէջ մանրամասն տեղեկութիւններ տրուած են նաեւ Լեւոնի գերեզմանին նկատմամբ։ Մեր ընթերցողներ կը յիշեն թէ Արմենիա լրագիրն էր որ Ա. տարւոյ 72դ թիւոյին (1886 ապրիլ 24) հրատէր կարդաց փափրկեան Հայերին մի ուխտագնացութիւն հատատակել Լեւոն Լուսինեանի գերեզմանին եւ այդ առաջարկի համեմատ Ա. հանդիսաւոր ուխտագնացութիւնն եղաւ 1886 մայիս 18ին, ինչպէս որ մինչեւ այժմ կը կատարուի ամեն տարի։ Արդ, Արմենիայի վերոյիշեալ թիւին մէջ, բացի այլ հետաքրքրական դրուածներէ, կայ նաեւ փարիզէն մի թղթակցութիւն որ սրբատոյղ եւ գեղեցիկ ոճով կը նկարագրէ այդ առաջին ուխտագնացութիւնն եւ հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ Ամն–Տրնեի այն շիրմի վրայ որ հանդչած է մեր ազատասէր վերջին Թագաւոր, Լեւոն Լուսինեան։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLE rue Vacon 50.